

պարտուց զանձինս թափել կարասցեն. ¹փոխ եւս ի պարտուցն ի վերայ առեալ, թերեւս երկպատիկ աւգտութեան ելի աղագս² գտանել կարասցեն. միանգամայն զպարտառուն³ հաճել⁴, եւ անձանց եւս միանգամայն աւգուտ շահի աւելագոյն ստանալ:

5 Չի բազումք⁵ այն են, որ առ այսպիսի աղետս տարակուսանաց⁶ ի վաճառականութեան արուեստս տուայտանաւք⁷ անկանել յաւժարեն: 6 Իսկ են բազումք, որ զիւրեանց առատութիւն եղեալ՝ ⁸աշխարհի աւգուտ գործեն, զարդարեալ⁹ զթագաւորս ի գիւտ ծանրագին¹⁰ մարգարտին, եւ զանազան ակամբք ¹¹պատուականաւք եւ կերպասու յերանգ երանգս գունոցն: 7 Նա եւ զաղբատս մեծացուցանեն՝ ¹²զփոքր ինչ ընդ յարգանաւք արկեալ, եւ զաշխարհ պսակեն խոր եւ չքնաղ գիւտիւք: 8 Նոքա եւ¹³ զկարաւտս¹⁴ լցուցանեն մեծամեծ շահիւք¹⁵ աւգտութեամբ. նոքա եւ զփափագելի մարդկան զպէտսն¹⁶ պատրաստեն. նոքա եւ դարմանեն զանձինս բազմաց. նոքա եւ զտունս բժշկաց լցուցանեն ազգի ազգի անուշահոտ ¹⁷խնկովք, դեղովք աւգտակարութեան. նոքա եւ զտենչալի բժշկութեան արմատոց աւգտակարութեան բերեալ զպտուղս՝ զպիտողսն¹⁸ լցուցանեն. նոքա եւ զարդ քաղաքաց¹⁹, նոքա եւ մեծութիւն ²⁰զաւառաց. նոքա եւ համարակարք երկայն ճանապարհաց. նոքա եւ ուղեգնացք աշխարհի. նոքա եւ²¹ ճաշակիչք ատա-

1 տ փոխ եւս ի պարտուցն եւս ի վերայ / առ փոխ ի պարտուցն եւս վերայ

2 տ աւելի եղագս / քա ելի աղագս / շ ելի յաղագս

3 քա զպարտառուն / տ զպարտաւորսն

4 առ շահել, փխ. հաճել

5 առ բազումք / տ բազում

6 առ տարակուսանաց / տ տարակուսի

7 առ տուայտանաւք / տ տուայտանաց

8 առ աշխարհի աւգուտ գործեն / տ աւգուտ աշխարհի

9 առ զարդարեալ / տ զարդարել

10 առ ծանրագիւտ, փխ. ծանրագին

11 առ պատուականաւք կերպասու յերանգ [ա յերանկ] երանգ / տ պատուականաւք եւ կերպասուց երանգ երանգս

12 առ զփոքր ինչ ընդ յարգանաւք արկեալս / տ փոքր ինչ յարգանաւք, եւ

13 առ չիք եւ (զկարաւտս)

14 առ զկարաւտս / տ զկարաւտեալս

15 առ շահիւքն / տ շահիւք

16 ա զպէտսն / շ զպէտն / տ զպէտս

17 տ խնկաւքն դեղովք աւգտականութեան / առ խնկովք դեղաւք աւգտակարութեան

18 առ զպիտաւղսն. չիք զպտուղս / տ զպտուղս. չիք զպիտաւղսն / Ուղղում եմ՝ միացնելով երկու ընթերցուածները:

19 տ աղբատաց, փխ. քաղաքաց

20 շ զաւառաց. նոքա եւ ուղեգնացք աշխարհի, նոքա եւ համակարք երկայն ճանապարհաց

21 առ չիք եւ (ճաշակիչք)